

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

2014-2015 ուստարվա ՀՀ դպրոցականների <<Աստղագիտություն>> առարկայի օլիմպիադայի կազմակերպման և անցկացման

1. Սույն Ընթացակարգով կարգավորվում են 2014-2015 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության դպրոցականների <<Աստղագիտություն>> առարկայի օլիմպիադայի /այսուհետ՝ Օլիմպիադա/ կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն Ընթացակարգով սահմանված Հավելվածների ձևանմուշները և Օլիմպիադայի վերաբերյալ այլ տեղեկություններ տեղադրված են olymp.am կայքում:
3. Օլիմպիադան կազմակերպվում է երեք փուլով:
4. Օլիմպիադան անցկացվում է 10-12-րդ դասարաններում սովորող աշակերտների համար՝ մեկ տարբերակով:
5. Ցածր դասարանում սովորողը կարող է մասնակցել օլիմպիադային: Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է դպրոցում:
6. Օլիմպիադան կազմակերպելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել ֆիզիկա և աստղագիտություն առարկաների մասնագետներ:
7. Առաջին փուլին կարող է մասնակցել ցանկացած սովորող՝ այդ մասին տեղեկացնելով դպրոցի տնօրինությանը:
8. Դպրոցի տնօրինությունը մինչև 2015 թ. հունվարի 30-ը ներառյալ հայտագրված աշակերտների վերջնական ցուցակը՝ ըստ Հավելված 1-ի ներկայացնում է մարզպետարան /քաղաքապետարան/:
9. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը դպրոցներից ստացված պատասխանների ձևաթղթերը ներկայացնում է մինչև 2015թ. փետրվարի 3-ը ներառյալ մասնակիցների ցուցակները ըստ հավելված 2-ի ներկայացնում է հանրապետական կազմկոմիտեին՝ info@olymp.am հասցեով:
10. Հանրապետական կազմկոմիտեն հաստատում է առաջին փուլի մասնակիցների ցուցակը, որը տեղադրվում է olymp.am կայքում:
11. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է 2015 թ. փետրվարի 11-ին ժամը 12:00-ին:
12. Դպրոցի տնօրինությունը պատասխանների լրացված ձևաթղթերը հանձնում է մարզային կրթության վարչություն, նույն օրը մինչև ժամը 18:00:
13. Մարզի կրթության վարչությունը պատասխանների ձևաթղթերը ներկայացնում է ՀՀ ԿԳՆ, մինչև փետրվարի 16-ը ժամը 18:00:
14. Օլիմպիադայի երկրորդ /մարզային/ փուլն անցկացվում է մարզկենտրոններում:

- 15.Երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ հանրապետական կազմկոմիտեի որոշման համաձայն:
- 16.Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է 2015թ. մարտի 2-ին ժամը 10:00-ին:
- 17.Օլիմպիադայի բոլոր փուլերի տարբերակները կազմում է հանրապետական առարկայական հանձնաժողովը:
- 18.Օլիմպիադայի երկրորդ փուլի աշխատանքները ստուգում է մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ կողմից ստեղծված առարկայական հանձնաժողովը:
- 19.Օլիմպիադայի երկրորդ փուլի մասնակիցների ցուցակները և ստացած միավորները (ըստ Հավելված 3-ի) մարզային կրթության վարչությունը մինչև 2015թ. մարտի 7-ը ներկայացնում է հանրապետական կազմկոմիտե՝ info@olymp.am էլեկտրոնային հասցեով:
- 20.Երկրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ դիպլոմներով և գովասանագրերով:
- 21.Առաջին և երկրորդ փուլերի առաջադրանքները և արդյունքները տեղադրվում են olymp.am կայքում:
- 22.Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է Երևան քաղաքում՝ ՀՀ ԿԳ նախարարության կողմից առանձնացված կենտրոնում:
- 23.Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է 2015 թ. մարտի 30-ին, սկիզբը՝ ժամը 10:00-ին:
- 24.Երրորդ փուլին մասնակցում են երկրորդ փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ համաձայն հանրապետական կազմկոմիտեի որոշման:
- 25.Երրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են ՀՀ ԿԳ նախարարության դիպլոմներով և գովասանագրերով:
- 27.Երրորդ փուլի դիպլոմակիրները համարվում են աստղագիտության միջազգային օլիմպիադայի ՀՀ թիմի հավակնորդներ:
- 28.Տեղեկությունները կարելի է ստանալ olymp.am կայքից: